

ՈՒԽՏ-2: ԱՌԱՅԾՄ ԱՆՎԱՏԱՐ ԾՐԱԳԻՐ

«Այնպես, որպես ես քայլել եմ մդրով,
Որդիս անպայման կքայլի ոդրով...»

ՇՈՎՃԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Այս՝ առայժմ անկափար: Իսկ ծրագիրն իրոք հրաշալի մփահղացման արդյունք է՝ ուխտավորներով անցնել Հովհաննես Շիրազի մարմնանշած յոթ սրբավայրերով, այդ վայրերում շաղ փալ Պանթեոնից վերցրած հողը, ոգեկոչել նրա իդը: Վյո ուխտափեղիներից մեկը Անին է...»

Գյումրիի՝ Հովհաննես Շիրազի հուշաբուն-թանգարանում պահպանվում է մի ձեռնափայտ, որ պոետին է ուղարկել սփյուռքահայ Պողոս Գուրեյյանը: Նա 1966 թվականի հունիսին այցելում է Հայաստան՝ հարկապես Հովհաննես Շիրազին գտնանելու և նրան նվիրելու փղոսկրե ձեռնափայտ: Անհարական պարզերով պարբասպած այդ զարդարուն ձեռնափայտին մակագրված է. «Շիշապակ՝ հայէ մը, մեծ հայուն-քանապեղօ Հովի. Շիրազին Պողոս Գուրելեանէ: Սիրքա Լեռնէ Վիրիկէ: 16.6.66թ.»: Այսանը՝ մակագրած: Իսկ բանավոր՝ «Սիրելի Շիրազ, վերջապես պատիվ ունեցա անձամբ հանդիպելու Ձեզ՝ մեծանուն պոետի հետ: Մաղթանքս է, որ իրական դառնա Ձեր բաղձանքը՝ բարձրանաք Մասիսն ի վեր, և այս անթացուալը ձեզ նեցուկ լինի»:

Երբ ծրագրվում էր «Յոթ բուռ» միջոցառումը, որը փաստորեն ուխտավորների մի նոր ճամփորդություն է Հովհաննես Շիրազի մարմնանշած վայրերով, նախաբենաված էր մի ամբողջ արարողակարգ. Հովի. Շիրազի հուշաբուն-թանգարանի բակում կազմակերպվում էր շիրազյան պոեզիայի ասմունքի ցերեկույթ, որի ավարտին հնչում էր «Վերջին իդս» բանասրեղծությունը:

Էլ իմ ոսկի երազը չեք, ով աղջիկներ մրահոն,
Ոչ սեր կուգեմ մահից այս կողմ,
ոչ էլ այն կողմ՝ պանթեոն,
...Էլ չեմ կարող ես դիմանալ
հայոց վշպին մփնակոխ,
Չանգի մի ողջ լեռնաշխարհից
հազիվ մնաց մի բուռ հող:
Էլ չեմ կարող, ինձ այրեցեք,
բայց մոխիրս բուռ առ բուռ,
Տարեք, ցրեք Հայաստանիս
յոթ կողմերը դեռ անդուռ,
Առաջին բուռն համասկուեք
կրծքին բանբված Մասիս,

Որ խառնվեմ իմ մեծ սրբին,
հովանա սիրդն իմ հույսի,
Թե չէ այսպես՝ ինչպես զարին
հեռու կապեն մոր մոդից,
Թե չձուլվեմ Արարափին՝ ես կմեռնեմ կարոփից...
Երկրորդ բուռը լուռ շաղ փվեք
մայր Արաքսի սրբի մեջ,
Որ հովանա մոխիրս մեջ էլ

կարուքավառ սիրսս խեղճ:
 Երբորդ բուռս գարեք ցրեք Ղարաբաղիս լեռներին,
 Որ մուրազի ծաղկունք դառնամ
 պանդուխս հողիս ձեռներին:
 Սրբիս մոխրի չորրորդ բուռը
 գարեք ծովակն իմ Վանա,
 Որ կարուից մեռած սիրսս կենդանանա, հովանա:
 Շինգերորդ բուռն՝ իմ Տարոնի
 դաշտերի մեջ շաղ պվեք,
 Որ իինք հազար դարեր բախե
 մոխրիս մեջ էլ սիրսս հեզ:
 Վեցերորդ բուռն հույսով գարեք,
 սերմեք Սասնա սարերին,
 Որ նոր Սասնա էպոս դառնա՝
 հառնի զալիք դարերին...
 Յոթերորդ բուռն իմ մոխրի՝
 որպես փյունիկը սրբիս՝
 Դուք շաղ պվեք հազարազանձ ավերակում Անիիս,
 Որ մոխրս շաղախ դառնա, իղձերս կամարվեն,
 Վեր գմբեթավող Անիիս մեջ
 հայ կանթևներս վառվեն...

Բանասքեղծության ավարտին թանգարանից դուրս էր թերվում ձեռնափայտը և
 հանդիսավորապես հանձնվում էր ուղարկողների առաջնորդին՝ բարեմաղթանքով, որ գոնե
 այս կերպ ինչ-որ չափով կկապարվի պոետի վերջին իղձը:
 ...Նամբերենք և սպասենք մեր զալիք այցին, հետո էլի նոր այցելությունների, մինչև որ...



Հարունակելի